Թ. Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՄԻ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարսանիքը մարդկանց կյանքում ծիսական կարևորագույն երևույթներից մեկն է։ Այդ իրադարձությունը նշանավորելու համար ժողովուրդը ընտրել է օրերի երջանկարեր թիվ, քառասուն օր ու գիշեր թագավորների և իշխանավորների, յոթ կամ երեք օր ու գիշեր հասարակ ժողովրդի համար։ Տարածվածը յոթ կամ երեք օր ու գիշերն է, իսկ քառասուն օր ու գիշերը, որ բանահյուսական տվյալ է, հավանաբար սովորույթի ուժով ստեղծված կրոնական պաշտամունքային (սակրալ) թիվ է։ Օրերի քանակը, սակայն, չէր փոխում հայկական հարսանիքի պատկերը։ Տարբերություններ կատարվող արարողությունների ճոխության և աղքատության մեջ էր, այսինքն նյութական էր. ծիսական առումով հարսանեկան ցիկլը նույնն էր։ Ուշադրության առարկա հանդիսացող հավթոունքի ծեսը հարսանիքում կատարվում էր նախավերջին օրը։ Ազգագրական տարբեր շրջաններում այն ուներ տարբեր անվանում։ Հավթոունք կոչվում էր Բասենում, Շիրակում, Ղարսում։ Ապարանում, Ջավախքում կոչվում է հավթոոնք, նույն Բասենում, Շիրակում, Ղարսում կոչվում է նաև որս, հորս, ֆորս, Սպահանում՝ հավագլուխ, Սասունում՝ խավթոունք, Հին Ջուղայում՝ որս տալ, Դարալագյազում՝ որս, Երզնկայում՝ հավթոում, Նոր Բայազետում՝ որձի իրիկուն, կամ որձի գիշեր, կամ ուղղակի որձ, Գողթնում՝ ուրս, Գանձակում, Բալուում, Լոռիում, Բորչալուում թագվորահորս, Մուշում՝ որձ զարնել և այլ տերմիններով։

Հայաստանի ազգագրական շրջանների մեր ձեռքի տակ եղած հավթոունքի տեսարաններից ամենահինը Երզնկայի Դերսիմ ավանինն է։ Ծեսը տեղի է ունենում կնքահոր տանը, մասնակիցները բացի կնքահորից միայն ազապներն են։ Ազապբաշու գլխավորությամբ վերջիններս սկսում են աշխույժ և առնական շուրջպար։ Պարի թեժ պահին զուռնաչին դադարեցնում է նվագը, լսվում են միայն թմբուկի համաչափ զարկերը։ Ազապները վերցնելով իրենց տնից բերած հավերը, աջ ձեռքի երեք մատներով պոկում են հավի գլուխները և նետում պարի հրապարակ։ Նորից հնչում է զուռնայի ձայնը, հավերը թափրտում են, իսկ պարաշղթան պտույտ է գործում Ներանց շուրջը։ Եթե ազապներից որևէ մեկը չկարողանա պոկել հավի գլուխը, մեծ անպատվություն է, նա դուրս է գալիս պարից և հավթոումի ճաշկերույթից։ Այդպիսի երիտասարդին գյուղից աղջիկ չեն տալիս[1]։ Ինչպես ցույց է տալիս այս հավթոումի տեսարանը, Դերսիմի հարսանիքում իր նախնական ձևով պահպանվել են ազապների միությունը, հավի մատաղման և նրա պաշտամունքի տարրեր։ Ազգագրական մյուս շրջանների օրինակները գալիս են հաստատելու նույնը։ Գողթան գավառում հարսանիքի նախավերջին օրվա երեկոյան մակարները (ազապները) դուրս են գալիս բակը և վերցնելով հարսի տնից ուղարկած հավը ե քավորի դաշույնը հերթով պսրում են, ատամներով պոկելով հավի փետուրները և նետելով դեպի վեր։ Վերջում պարում է «թագավորը» թուրը ձախ, հավը՝ աջ ձեռքին բռնած, և ավարտում է պարը հավի վիզը սրով կարելով։ Մակարները «կեցցե» բացականչություններով գրկում, վեր են բարձրացնում «թագավորին»[2]։ Վայոց ձորում այս ծեսը կատարվում է թագուհուն պարեցնելու ժամանակ։ «Թագավորը», քավորը և փեսայի եղբայրը բարձրանում են տանիքը, «թագավորը» քավորի թրով այնպես է թոցնում հավի գլուխը, որ այն ընկնում է պարողների շրջանի մեջ[3]։ Շիրակում նույնպես պսակաճաշի երեկոյան ազապները փեսայի, խաչեղբոր հետ դոլ-զուռնայով հավաքվում են փեսայի տան կտուրը։ Ծեսը կատարելուց հետո ներանք գլխատված հավերը նետում են ցած, որ սանտիկինը եփի։ Հավերն ուտելուց հետո, բոլորն առանց խրտրության շուրջպար են բռնում և մինչև ուշ գիշեր պարում են, ապա նոր հարսին պարի հրավիրում[4]։ Շատախում ազապները փեսայի տան կտուրին կամ դռանը հավն ու թուրը ձեռքներին

---

1 Ազգագրության սեկտորի արխիվ, Գ. Հալաջյան, «Երզնկայի Դերսիմ ավան», էջ 111։

2 «Ազգագրական հանդես», 1905, գիրք 12, էջ 133։

3 «Ազգագրական հանդես», 1906, N 1, գիրք 13, էջ 163։

4 Վ. Ամատունի, Ժողովրդական բանավոր գրականություն, Մոսկվա, 1901, էջ 238։

պարելուց հետո՝ մորթում են հավերը, կամ, ինչպես իրենք են ասում, «արուն են թափում, որ փեսեն ղուշաղ ըլնի»։ Այնուհետև, ճկույթ-ճկույթի տված, նաղարայի նվագակցությամբ, երգելով երկու քայլ առաջ են գնում, մեկ քայլ ձախ, և այսպես աստիճանաբար պարի և երգի տեմպը արագացնելով, վեր են ածում թոնոցիի[5]։ Վարանդայում հավը քավորի տնից են բերում։ Մակարներից մեկը հավը, մյուսը դաշույնը ձեռքին պարում են, ապա ծեսը կատարելու համար դաշույնը տալիս են քավորին, հավը՝ «թագավորին» և այդ ընթացքում «ուռա» բացականչություններով գովում են «թագավորի» քաջությունը[6]։ Բուլանրխում հավի գլուխը թոցնելուց առաջ «թագավորը» բռունցքի հարվածով պետք է կոտրի առջևը գրած կավե ամանը[7]։ Սրանով այլաբանորեն խորհրդանշվում է «թագուհու» կուսության վերացումը։ Ապարանում և Ջավախքում հավթռունքը կատարվում է «թագավորի» տանը, հարսին տուն բերելիս։ Ապարանում այս ծեսից մնացել է տարբական մի սովորություն՝ ազապներից մեկը թրով թոցնում է մի հավի գլուխ[8]։ Ջավախքում, երբ թագվորամայրը դուրս է գալիս և ընդունում է նորապսակներին, խոնարարուհին թագվորցիներին (ազապներին) հավ է տալիս, և նրանցից մեկը դաշույնի մի հարվածով պետք է թոցնի հավի գլուխը, եթե չկարողանա այդ բանն անել՝ մի հավ տուգանք է տալիս։ Ապա փորձում է մյուսը, եթե այս անգամ կարողացավ, ծեսը վերջանում է, իսկ եթե ոչ՝ շարունակվում է նույն կարգով։ Հին Ջուղայում որս տալը կատարվում է երկուշաբթի օրը։ «Թագավորի» տան բակում, գորգի վրա քավորը խաչաձև դնում է սուրն ու պատյանը և մի բաժակ գինի։ «Թագավորը» երեք անգամ ծուներ է դնում և գինին խմում։ Ազապբաշին տալիս է նրան հարսի հայրական տնից բերած հավը, «թագավորը» գլխատում է։ Ազապները մորթում են իրենց տնից բերած հավերը[10]։ Սպահանի Ջահարմահալ գավառում «թագավորի» մոտիկ բարեկամները բերում են տաս-տասնհինգ հավ և աքաղաղ ու տալիս են վարսավիրին, որը բռնում է դրանց ոտքերից գլխիվայր, իսկ «թագավորն» ու ազապները սրի հարվածով թոցնում են գլուխները[11]։ Սասունի Խլաթ գյուղում «թագավորը» դիք (աքաղաղ), ազապները հավ են խաղացնում և գլուխը թոցնում։ Մի տղա փախցնում է «թագավորի» աքաղաղը, ազապները վազում են հետևից և խլխլում են միմյանց ձեռքից։ Աքաղաղն ու հավերը հանձնում են տանտիկնոջը, որը դրանք եփում և ճաշկերույթ է տալիս։ Ճաշից հետո, ողջ գիշերը մինչև աքաղաղի կանչելը պարում են։ Հենց որ աքաղաղը երեք անգամ կանչում է, «թագավորինն» ու «թագուհուն» պարի են հրավիրում։ Պարն ավարտելուց հետո հավաքում են հավերի ոսկորները, շարում թելի վրա և որպես նվեր գցում են հարսնեղբոր վիզը[12]։ Գանձակում «թագվորաորսը» տեղի է ունենում գերեզմանատանը։ Երեկոյան այդ հավից պատրաստած ճաշով հյուրասիրում են փեսային ու մակարներին[13]։ Նոր Բայազետում հարսի տնից բերում են մի ոչխար, գառ կամ սագ, մակարների տնից մի-մի հավ։ «Թագավորը» գառ, ոչխար կամ սագ է մորթում, մակարները՝ հավ[14]։ Հավթռունքի ծեսի Նոր Բայազետի տարբերակը հավանարար ավելի ուշ շրջանի արտահայտություն է, որովհետև այստեղ նկատելի է սոցիալական շերտավորման և դրան համապատասխան մատաղվող կենդանու արժեքի հարցը։ Ընդհակառակն այս ծեսի պաշտամունքային կողմը ուժեղ ձևով պահպանվել է Շիրակի, Ղարսի, Բասենի գյուղերում։ Այստեղ հավերը ժողովում են ազապները։ Առաջինը «թագավորն» է մորթում, և այդ հավը պետք է պսակված մարդիկ ուտեն, մեկական հավ տալիս են քահանային, քէհինին (ճաշերը պատրաստողին), ջուռնաչուն, «թագավորինն» ու «թագուհուն», իսկ մնացածները ազապներին[15]։ Հավթռունքի ծեսը այլ երանգ է ստանում Դարալագյազի շրջանում։ Այստեղ հարսանիքի վերջին օրը տեղի է ունենում «կաքավի որս»։ Հարսանիքի վերջում խնջույքը ճոխացնելու համար ազապները զինված բազեներով, շներով և ձիերով գնում էին որսի։ Կաքավին բազեն էր որսում, ազապները որսը կաղմակերպողներն էին[16]։

---

5 Անահիտ Զաքարի Մարդարյան, ծնվ. 1897 թ., Շատախից։
6 «Ազգագրական հանդես», 1897, գիրք Բ, էջ 135։
7 «Ազգագրական հանդես», 1899, № 1, էջ 112։
8 Գ. Հովսեփյան, Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1892, էջ 51։
9 «Ազգագրական հանդես», 1895, հատոր Ա, էջ 258։
10 «Ազգագրական հանդես», 1901, գիրք 7 և 8, էջ 198։
11 «Բազմավեպ», Սպահանի Ջահարմահալ գավառը, 1924, էջ 334։
12 «Էմինյան ազգագրական ժողովածու», 1906, Վաղարշապատ, հատոր Զ, էջ 387։
13 «Ազգագրական հանդես», 1900, Զ գիրք, էջ 263։
14 «Ազգագրական հանդես», 1907, գիրք 16, էջ 27։
15 «Ազգագրական հանդես», 1901, գիրք 7 և 8, էջ 198։
16 «Փորձ», 1881, № 6, Դարալագյազցիների հարսանիքը։

Կաքավի և այլ թռչունների որսի մասին հիշատակություններ հայերի մոտ կա ամենահին ժամանակներից։ Հայտնի է, որ հեթանոս հայերը Արամազդին ու Անահիտին, ինչպես նաև Ամանորին նվիրված տոնակատարությունների ժամանակ աղավնիներ էին թռցնում, թռչուններ որսում։ «Որսորդութիւնք երէց եւ հաւուց մէկ կողմէն, իսկ միւս կողմէն ալ խազէր եւ երաժշտութիւններ վեց օր վեց գիշեր զհամաշխարհի եկուորսն կը զրաղեցնեին»17 Մովսես Խորենացու վկայությամբ, թռչնորսությամբ զրաղվել են մեր թագավորներն ու նախարարները18։ Կաքավի որսի որոշակի նկարագրություններ կան Ղազար Փարպեցու մոտ19 և այլուր։ Կաքավի որսի լայն տարածումը հայկական կենցաղում այլաբանությունների տեղիք է տվել, արտահայտվել է հայ բանավոր պոեզիայի՝ հատկապես հայրենների շարքում, որպես սիրահար զույգերի՝ կաքավի և բազեի փոխհարաբերություն։ Պատմությունից հայտնի է, որ հին ժամանակներում ամուսնությունը տեղի էր ունենում կամ առևանգման, կամ գնման միջոցով։ Բանավոր պոեզիայում աղջկան իր ցեղից առևանգելը արտահայտվել է բազեի կողմից կաքավին որսալու այլաբանությամբ։ Արտաշես թագավորին նվիրված վեպում Խորենացին նկարագրում է Արտաշեսի «որպես զարծուի սրաթև ընդ դետն» անցումը և ալանների դուստր Սաթենիկի առևանգումը։ Առևանգմամբ ամուսնությունը մեր ժողովրդի բնորոշ կենցաղային դեպերից է եղել։ Դրա ապացույցներից են նաև վերջինիս դեմ սահմանված օրենքները (Վաղարշապատի եկեղեցական ժողովը 325 թ. և Շահապիվանի ժողովը 447 թ.), ինչպես նաև հարսանեկան երգերն ու պարերգերը, որոնցից շատ շատերում պարզորոշ կերպով զովերգվում կամ ներկայացվում է առևանգումը։

Ազգագրական շրջանների հավթռունքի նկարագրությունները հիմնականում ցույց են տալիս Հայաստանում երբեմնի կենցաղավորված երկու կարգի երևույթ։ Առաջինը ամուրիների միության վերապրուկներն են, ուր ուսումնառության շրջան է անցնում ապագա «թագավորը» և հասնում լիակատար հասունության՝ ամուսնության իրավունք է ձեռք բերում։ Ինչպես տեսնում ենք վերևում նշված օրինակներում, «թագավորը» միշտ հաղթանակող է, արժանի խրախուսանքի։ Ինչպես հարսանիքի ողջ ընթացքում, այնպես էլ հավթռունքի ծեսի ժամանակ ասպարեզ է տրվում ամուսնացող երիտասարդին հոգու բարձրագույն կարելիությունների դրսևորման համար, ինչպես նաև ամրացվում է նրա հավատը սեփական ուժերի նկատմամբ՝ նախապատրաստելով նրան ամենադժվարին ու կարևոր քննության՝ ամուսնության։ Հավթռունքի ծեսի հետ կապվող մյուս հարցը թռչունների երբեմնի գոյություն ունեցող պաշտամունքի հետքերն են, որ առկա է ոչ միայն հարսանիքում, այլև հայ հոգևոր և մտավոր ողջ ժառանգության մեջ։ Հավթռունք բառը, ըստ Հայկազյան բառարանի20, բացատրվում է որպես հավի որս, մեկ այլ տեղ «Իշխան, թագավոր ուխտի, մայիսի 7-ին, հավ են թռցնում մեծ բազմությամբ»21։

Հայտնի է, որ հավը զրաբարում նշանակում էր և հավ և աքաղաղ և ընդհանրապես ամեն տեսակի թռչուններ, հավքեր, ինչպես նաև մոտ և հեռու նախնիներ։ Հավ հասկացողությունը միաժամանակ կապվում էր հայ հնագույն պաշտամունքային ձևերի հետ։ Դրա արդասիքն է, որ ընդհանրապես թե՛ հայերի, և թե՛ աշխարհի բոլոր ժողովուրդների հարսանիքներում առանց աղավնի թռցնելու, հավ և աքաղաղ մատաղելու ու միսը ճաշակելու տոնախմբություն լինել չէր կարող։ Ավելին, հարսանեկան ծեսերում խստորեն պահպանվում էր այն կարգը, թե ով և երբ կարող է հավի միս ուտել։ Իմաստից զուրկ չէր նաև հարսանիքում կամ ընդհանրապես հայկական ծեսերում օգտագործվող հավի գույնը։ Մանկական խաղերի շարքում կան հաճախակի հանդիպող այսպիսի տողեր.

«Թռի, թռի թռցնեմ
Սև հավի միս կերցնեմ» և այլն։

Հարսանիքում հարսի և «թագավորի» պատվին մատաղվող հավերը մեծ մասամբ սպիտակ են, հավթռունքին «թագավորի» մորթած աքաղաղը կամ հավը՝ սև, «թագավորի» և «թագուհու» գլխի վրա բաց թողնվող աղավնիները՝ սպիտակ։ Ժողովրդական մտածողությամբ աղավնին սիրո, պտղաբերության նախամայրն է. ասվում է սիրվելը, զունդունալը աղավնուց է մնա-

---

17 Հ. Բ. Սարգսյան, Ադաթանգեղոս և յուր բազմաղարյան գաղտնիքը, Վենետիկ, 1890, էջ 112։

18 Խորենացի, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1865, էջ 194։

19 Ղազար Փարպեցի, Պատմագիրք Հայոց, Թիֆլիզ, 1904, էջ 10—11։

20 «Նոր բառագիրք Հայկազեան լեզվի», հատոր II, 1837, Վենետիկ, էջ 19։

21 Կ. Դարիկյան, Բառագիրք Սեբաստացի գավառաբարբառի, 1952, Երևան, էջ 336։

զել։ Ժողովրդական հանելուկներում հարսն ու փեսան ներկայացվում են որպես «ցուխտ աղունակ վանրումբ»։ Ընդհանրապես շատ ժողովուրդների մոտ մի շարք աստվածություններ առաջ են դալիս թռչուն տոտեմից։ Աղավնին անբաժան է նաև Անահիտի, Աստղիկի պաշտամունքից։ Հետագայում՝ քրիստոնեության շրջանում ևս աղավնին շարունակում է մնալ որպես հարսնության խորհրդանիշ։ Գրիգոր Նարեկացին «Մեկնություն երգոց երգոյն Սողոմոնի» աշխատության մեջ նորա՝ հարսին համեմատում է աղավնու հետ, վերջինիս մաքրության, անմեղության և հավատարմության հատկանիշներով։ Եթե ժողովրդական մտածողությամբ աղավնիները որպես սիրահարներ հարսն ու փեսան են, ապա հավը կապվում է հարսի, իսկ աքաղաղը՝ «թագավորի» հետ։ Արքիկում հարսին գուգելուց, «թագուհի» կանգնեցնելուց առաջ երբ լողացնում են, նա տաշտի մեջ թռչունի պար է պարում, ձեռներով թռչունի շարժումներ անելով[23], իսկ երբ «թագավորն» ու «թագուհին» եկեղեցում պսակվելուց հետո տուն են վերադառնում, գռան շեմին մատաղում են աքաղաղ կամ ոչխար։ Ցվանքգում (Իգմիտ) «թագավորը» երբ ոտք է գնում հարսի շեմը, նրա աջ ոտքի վրա աքաղաղ են մատաղում, սա «թագավորի» կողմնակիցների բաժինն է, իսկ երբ հարսն է ոտք դնում իր նոր օջախի դռանը, նրա աջ ոտքի վրա հավ են մորթում, սա էլ հարսնախպերներին է պատկանում[24]։ Շամախիում «թագավորը» հենց ներս է մտնում «թագուհու» տուն, խոնարարուհին նրա առաջ եփած հավ է դնում[25]։ Զանգեզուրում հարսնախոսության գնալիս տղայի մայրը համեմունքներով տապակած հավ է տանում[26]։ Վասպուրականում «թագավորի» տան առաջ են զոհում ոչխար կամ հավ[27]։ Հավ անպայման լինում է Հայաստանի բոլոր ազգագրական շրջանների «թագավորներին» բերած նվիրատվությունների մեջ։ Սիսիանում առագաստի մոտ դրվում է եփած հավ[28]։ Ջիվանշիրի գավառում հարսի տանը «բեկին» (այդպես են կոչում այստեղ «թագավորին»), որպես բերանբացուկ, բերվում է խանխորուզի (փեսայի աքաղաղ)[29]։ Զանգեզուրում փեսայի հայրը կամ մեծերից մեկը եփած հավ է տանում քավորին և հրավիրում հարսանիք[30]։ Վարանդայում գլխարվային էլ են հավ տանում[31]։ Ապարանում «թագավորը» իր ազապներով ձեռքներին մի-մի մոմ բռնած ընկնում էին բարեկամների տները և դռան առաջ գոռում՝ «Բառն ի թագավորին», մեկ ուրիշը պատասխանում է՝ «Աստծու զառն ի թագավորին», այնուհետև մտնում էին ներս, համբուրում տան ավագ անդամի ձեռքը, մի հավ նվեր ստանում և դուրս գալիս[32]։ Գողթնում առագաստի մյուս օրը, երբ մակարները կատակով միմյանցից դանգատվում են «թագավորին», նա կարգադրում է իրրև տուգանք մեղադրվածից պահանջել մի հավ։ Մակարները բռնում են մեղադրվածին, ոտքերը շղթայում, կապում սյունից և թողնում այնքան ժամանակ, քանի դեռ չի ստացվել նշանակված տուգանքը[33]։ Բորչալուում, փեսայի տանը կայացած խնջույքի ժամանակ, քուրքը թարս հագած, գլխին քոլոգ դրած մեկը շահ է ձսանում, և մարդկանց գանազան մտացածին հանցանքների մեջ մեղադրելով, կապել է տալիս սյունին և հավ է պահանջում որպես փրկագին[34]։ Նոր Նախիջևանում հարսն ու փեսան երբ տուն են մտնում, փեսայի մայրը նրանց դիմավորում է մի գույգ սպիտակափետուր, վզներին կարմիր ժապավեններ կապած աղավնի ձեռքին և արձակում է նրանց գլխի վրայով։ Նոր Նախիջևանի գյուղերում աղավնու փոխարեն սպիտակ հավեր են բաց թողնում[35]։ Դարալագյազի գաղթականները կանչի հետևյալ առավոտյան «թագավորին», քավորին և ազապներին սագանդարներով կամ գուռնայով պտտեցնում են բարեկամների տները հավեր ժողվելու, որոնց «զուշ» են անվանում, այսինքն ընդհանրապես թռչուն և փեսայի ծառերի հետ կազմում են «թագավորի» խազինան։ Երևկոյան «թագավորը», քավորը, ազապները վայելում

22 Ամատունի, Ժողովրդական բանավոր գրականություն, Մոսկվա, 1901, էջ 101։
23 Սրբ. Լիսիցյանի անտիպ նյութերից։
24 «Բյուրակն», 1898, № 23, էջ 473։
25 «Մեղու Հայաստանի», 1866, № 4, էջ 26։
26 «Ազգագրական հանդես», 1898, գիրք 2, էջ 66։
27 «Ազգագրական հանդես», 1910, գիրք 20, էջ 152։
28 «Ազգագրական հանդես», 1898, [illegible], գիրք Ա, էջ 226։
29 «Նոր-Դար», 1890, № 207։
30 «Ազգագրական հանդես», 1898, Գ գիրք, № 2, էջ 74։
31 «Ազգագրական հանդես», 1897, Բ գիրք, էջ 143։
32 Գ. Հովսեփյան, Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, էջ 54։
33 «Ազգագրական հանդես», 1905, գիրք 12, էջ 134։
34 «Ազգագրական հանդես», 1902, գիրք 9, էջ 243։
35 «Ազգագրական հանդես», 1901, գիրք 7 և 8, էջ 84։

են հավերն ու ծառերի վրայի մրգերն ու քաղցրավենիքը[36]։ Բորչալուում և Գանձակում «թագավորը» իր ազատներով կամ մակարներով ընկնում էին պատահած հավերի հետևից և սպանում։ Հավատերերից ոչ մեկը դժգոհություն հայտնելու իրավունք չուներ[37]։ Հետաքրքրական են Իջևանի շրջանի Աչաջուր գյուղի և Լոռվա հարսանեկան արարողություններից հավի պաշտամունքի հետ կապվող հետևյալ փաստերը։ Իջևանում, երբ հարսի մոր կողմից «թագավորին» է մատուցվում մագա (մրգեր և քաղցրավենիք), եփած հավի հետ միասին, «թագավորն» անմիջապես ստուգում է, հավը արդյոք ամբողջական է, թե ոչ։ Եվ եթե նրա որևէ մասը, ասենք քարաճիկը պակասում է, քավորը մեծ տուգանք է տալիս, որ վերադարձնեն[38]։ Իսկ Լոռիում երբ հարսի մոր կողմից մատուցված հավը քարաճիկ չի ունենում, քավորը բարկանում է և քարաճիկով հավ է պահանջում ասելով՝ տվածդ հավը բարաճիկ չունի, աղջիկդ էլ պակասություն կունենա։ Այլ խոսքով պահանջում է լրիվ հավ և անթերի աղջիկ[39]։ Հայկական բանահյուսության մեջ, հատկապես հեքիաթներում հավի քարաճիկը իմաստության սիմվոլ էր համարվում և ով որ այն ուտում էր, ենթակա էր մեծ գործերի և հակառակը, պետք է ենթադրել, որ անքարաճիկ հավի ճաշակումը կարող էր հակադարձ ազդեցություն ունենալ, ինչպես «թագավորի», այնպես էլ նրա «շքախմբի»՝ ազատների վրա, որոնք բաժանում են մագան իրար մեջ հավասար չափով և ուտում։ Հավի պաշտամունքի հետևանք է, որ Վարանդայում «թագավորին» առաջ հետևյալ ձևով պատրաստած հավ են տանում։ Հավը եփելուց հետո գլուխը նորից կարում են վզին և շամչով շարված թելով փաթաթում են հավին այնպես, որ ամբողջովին պատած է լինում շամիչով, ապա մեջքին շամչե թամք են դնում, փորոտիքն էլ լցնում են համեմունքներով[40]։ Պարզ է, որ այսպիսով ժողովուրդը նպատակ ունի ցույց տալ ոչ թե լոկ բնական հավի պատկերը, այլ պաշտամունքային հասկացողությունների հետ կապված հավի իմաստը։ Թռչունների երրեմնի պաշտամունքի արձագանքներ հայ հողևոր և մտավոր մշակույթի պատմության մեջ շատ են։ Թռչունների երրեմնի պաշտամունքի ակնհայտ վերապրուկներ եղել, պահպանվել և մինչև մեր դարասկիզբն են հասել այնպիսի մի հնագույն ինստիտուտում, ինչպիսին հարսանիքն է։ Հարսանեկան շատ արարողություններ պայմանավորվում են աքաղաղի կանչով։ Ալնիայում կամ Զեյթունում, Սասունում և Խլաթում հարսանիքի պատրաստությունները, հարսի հետևից գնալը կապվում են աքլորականչի հետ[41]։ Հայաստանի ազգագրական բոլոր շրջաններում հարսին ու փեսային պարի են հրավիրում հարսանիքի վերջին օրը, աքաղաղի երեք բերան կանչից հետո, լուսագեմին և դրանով էլ հարսանիքն ավարտվում է։ Ժողովուրդը աքաղաղի կանչին վերագրել է բարին գուշակող ու ավետող հանգամանք՝ միսը ճաշակելուն և արյանը բուժիչ հատկանիշ։ Խորոզ մնալ արտահայտությունը հայերենում նշանակում է «չատերու մեջ հիվանդութենէ ազատ մնալ»[42]։ Քանի որ աքաղաղի կանչը կապվում է լույս ու ջերմություն բերող արևածագի հետ, նրան վերագրվել է պտղաբերությանը ոժանդակող և նրա վրա ազդող մեծ ուժ։ Աճառյանի ստուգաբանությամբ աքաղաղը՝ որձակը որձ էգ բառերի միացյուսում է և իր մեջ միավորում է կյանքի հարատևության երկու նախապայման[43]։ Ժողովրդական հանելուկն աքաղաղին տալիս է հետևյալ նկարագիրը.

Թագավոր թագն ի սղոց,
Քեռասուն կին ունի փուղոց,
Ուր կթողու կերթայ այլոց[44]։

Աքաղաղի, որպես պտղաբերության սիմվոլի, խորին խորհուրդն է հավանաբար թաքնված եղել Արևմտահայաստանում կենցաղ դարձած այն սովորության մեջ, երբ կանայք հավերին ու աքաղաղներին կուտ տալիս դեմքը քողարկում էին, հավատալով, որ աքաղաղները պատկանում

36 Նույն տեղում, էջ 200։
37 «Ազգագրական հանդես», 1902. գիրք 9, էջ 244։
38 Ազգագրության սեկտորի արխիվ, Է. Կարապետյան, Իջևանի ազգագրությունը, էջ 58։
39 Բանահյուսության սեկտորի արխիվ, Թ. Գևորգյան, Գուգարքի շրջանի բանահյուսության դրառումներ, էջ 210։
40 «Ազգագրական հանդես», 1897, գիրք Բ, էջ 130։
41 Ալահվերդյան, Ալնիա կամ Զեյթուն, Պոլիս, 1889, էջ 72։
42 Հ. Գարիկյան, Բառգիրք Սեբաստահայ դավառաբեզվի, 1952, Երևան, էջ 266։
43 Աճառյան, Քննություն Ղարաբաղի բարբառի, 1899, Վաղարշապատ, էջ 82։
44 Շերենց, Վանա սաղ, 1885, I մաս, Թիֆլիզ, էջ 140։

են Ադամի սեռին[45]։ Հարսանիքի «թագավորը» աքաղաղի պաշտամունքի հետ կապվում է նաև իր արտաքին նկարագրով։ Հայտնի է, որ հարդարանքն ու պաճուճանքը հնագույն պաշտամունքային ձևերի հետ են առնչվել։ Հարսանիքի մասնակիցներից շատերը հնում հատուկ զգեստավորում են ունեցել, իսկ փեսան, առանց այդ հատուկ զգեստավորման «թագավոր» լինել չէր կարող։ Եթե պսակվողը չքավորության պատճառով չէր կարողանում ձեռք բերել այդպիսի հանդերձանք, փոխարինաբար խնդրում էր ուրիշից։ Հարսանիքի «թագավորին» հագցնում էին բոլորովին նոր հանդերձներ. գլխին սպիտակ բոլոր, քուրզի շորս կողմը կարմիր և մանիշակագույն փուշիկներով փաթաթած, մեջտեղը դրվում էր պսակը, ջղան (ըստ Աճառյանի ճղա), մեջքին ընտիր պարսկական շալ՝ մինչև կուրծքը փռված և վրան ամրացված կեռ դաշույն։ Հագնում է կամ լայն բանավարա կամ նեղ շափրք (լայն և նեղ անդրավարտիքներ), ոտքերին կարմիր երկարակող ջղմա (մոյկ) կամ կոնդուրա (նոր ձևի կոշիկ) և բոլորի վրայից թևերը կախ ուսերով ձգած ֆարաջայի նման լայն ու երկայն չուխա դալման[46]։ Վերը բերված Բուլանրխի «թագավորական» զգեստին հար և նման է Հայաստանի մյուս ազգագրական շրջանների զգեստավորումը։ Հայտնի է, որ ինչպես էլ հագցնեին «թագավորին», նրա գլխին կամ ծառի վրա ամրացնում էին աքաղաղի սրածայր փետուրներ, իսկ փեսայի ծառի ծայրին մեծ մասամբ դրվում էր հավ կամ խաչ, որը կոչվում էր բղրվնիկ կամ կաքավ։ Ընդգծված է նորափեսայի կեցվածքը, շարժ ու ձևը, նստելու տեղը։ Երբ նա հպարտ քայլվածքով, ազապների խմբով շրջապատված գալիս նստում է թախտին, ազապներից մեկը կոռում է. «Թագավորը թառն է», մեկ ուրիշը պատասխանում է՝ «Աստծու գառն է»։ Նույն կերպ է նշվում նաև «թագուհու» թախտին նստելը։ Թառը, որ կապվում է հավերի և աքաղաղների հետ, այստեղ հանդիսանում է «թագավորի» թախտը։

Հարսանիքում Բուլանների երբեմնի պաշտամունքի հետքեր կրում են ոչ միայն «թագավորն» ու «թագուհին», այլև ողջ հարսանքավորը։ Շատ բնորոշ է այդ տեսակետից, Բուլանրխում և Վարանդայում հարսանքավորին ուտելիք նետելու գործողությունը։ Վարանդայում «Մառանապետը բարձրանում է ալյուրի շտեմարանի վրա և սոխ է շպրտում։ Մեկ ուրիշը լորի է շաղ տալիս սփռոցների վրա»[47]։ Բուլանրխում մեջտեղ են բերում միսը ճղճղնած, գաթան ու հալվան կտոր-կտոր արած, մաղերի մեջ, հեռվից նետում են հավաքվածներին[48]։ Նույն Բուլանրխում, երբ երկու խնամիները համաձայնության են գալիս և հաց են կիսում, ներկանները նրանց գլուխները խփում են մեկ-մեկու[49], մի բան, որ տեղի է ունենում աքլորակռվի ժամանակ, որից էլ հավանաբար առաջացել է կատար կատարի տալ արտահայտությունը։ Հայտնի է, որ կատարը փոխաբերական իմաստով նշանակում է մարդու գլուխ և թևավոր խոսքեր են դարձել կատարը տաքանալ (հարբել), մին մինու կատարից կենալ (կռվել) արտահայտությունները, ամոթ նրանց կատարին նախատինքը ասված արիությամբ աչքի չընկնող տղամարդկանց մասին և այլն։ Մինչև մեր ժամանակներն է գալիս տղամարդկանց գրլխարկների վրա կակարդ կրելու սովորությունը, իսկ հայերենում կակարդ նշանակում է աքաղաղի կատար[50]։

Այսպիսով տեսնում ենք, որ կենցաղավորությունը կորցրած, բայց իր գոյությամբ ամենամնայուն և կիրառական ծեսում՝ հարսանիքում պահպանված հավթոունքի ծեսը Թռչունների երբեմնի պաշտամունքի մնացորդ է։ Հարսանիքում ամեն առիթով մատուցվող, մատաղվող հավի մսի ճաշակումը թռչուն տոտեմի հետ միրձենալու, նրանից ուժ ստանալու նպատակն է հետապնդել։ Հավ, աղավնի թոցնելը, կտրիճ վայր կամ պարի շրջան նետելը, նախնիների գերեզմանների վրա մատաղելը համարվել է նախնիների սրհնության փոխանցումը թռչունների միջոցով։ Հավթոունքը, որպես հնագույն պաշտամունքային ծես իր գոյությունը պահպանել է հարսանիքում, որովհետև հարսանիքը հարատևում է նախնիների գոյակցությունը, իսկ նախնիները, ինչպես ցույց են տալիս վերոբերյալ փաստերը, հանդես են եկել թռչունների երբեմնի պաշտամունքի ձևերով։

---

45 «Բյուզանդիոն», 1899, № 820, «Նոր հարսներ հին ասենս»։

46 «Ազգագրական հանդես», 1899, № 1, էջ 109։

47 «Ազգագրական հանդես», 1897, գիրք Բ, էջ 130։

48 «Ազգագրական հանդես», 1899, № 1, էջ 107։

49 Նույն տեղում, էջ 94։

50 Կ. Դ ա ր ի կ յ ա ն, Բառագիրք Սեբաստահայ գավառաբարբառի, 1952, Երուսաղեմ, էջ 282